Գրիգոր քհնյի. Տ. Մատթէոսեան Թէլաւի, Ղազարոս քհնյի. Ենգիբարեան Ելենէնտորֆ աւանի Դանձակայ, Աբշակ քհնյի. Մինասեան՝ միաբանի Ջիդրաշէն եկեղեցւոյն Տփխեաց և Երուանդ քհնյի. Տ. Միքայէլեանց—կրօնաւորացի արքունի ուսումնարանաց Դանձակայ։ Թ. Թ. 432, 469, 472, 473 և 475։

Գ.

Հայրապետական շնորհակալիք եւ օրհնութիւնք։

Կոնդակք յանուն ժողովրդականաց Եարմշա և Ջահուկ գիւղօրէից Հին Նախիջևան գաւառի վասն նուիրաբերելոյ մի մի հարիւր ռուբլիս։ Թ. 359 և 360։

— Ցանուն պ. Թադէոսի Յովսէփեանց վասն աշխատութեան և վերահսկողութեան նորա ի կառուցման աղօթատան հայոց Սմրղանդ քաղաքի։ Թ. 379։

**

ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՕԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ

Մայիսի 10 ին Սինոդը լսելով Երևանի Տ. Նահանգապետի կարծիքը, որ իւր կողմից արգելք չկայ Խաչատուր Տէր Ներսիսեան Տէր Գէորգեանին Բաշաբարան գիւղի վրայ քահանայ ձեռնադրելու, որոշեց հրամայել Երևանի Կոնսիստորիային՝ ձեռնադրել յիշեալ Խաչատուրին քահանայ և վերադարձրեց նրա բոլոր վկայագրերը։

Նոյն թուին Սինոդը որոշեց ընդունել հոգևորականութեան մէջ Զայքէնդ գիւղացի Վիրաբ Ասրեանին և ձեռնադրել նրան քհնյ. Խարտաուբաղար քաղաքի։

Մայիսի 12 ին Սինոդը հրամայեց Աստրախանի Կոնսիստորիային տաճկահինդօրեայ եկեղեցական ապաշխա-

բանքի ենթարկել զինուոր Վարդան Ներսիսեանին՝ անձնասպանութիւն գործել ցանկանալու համար։

Մայիսի 19 ին Սինոդը ճանաչելով Հին-Նախիջևանի Հոգևոր Կառավարութեան անդամներ Տ. Մկրտիչ աւագ քհնյ. Տէր Սարգսեանին և Յակոբը քհնյ. Տէր Մինասեանին յանցաւոր, որ նրանք առանց երրորդ անդամոյ կամ նախագահի մասնակցութեան օրագիր են կազմել և թոյլատրել անչափահաս Վարսենիկ Հայրապետեանի պսակը, որոշեց յիշեալ երկու քահանաներին և ներկայ քարտուղարին յանձնել մարմնաւոր դատարանին։ Իսկ եթէ Վարսենիկ Հայրապետեանն ու Մարգար Յովհաննիսեանը միասին են ապրում և համաձայն են ապրել այսուհետև ևս, այդ դէպքում նրանց պսակը համարել օրինաւոր։

Մայիսի 19 ին Սինոդը լսեց կառավարիչ Սենատի № 1024 հրամանը մայիսի 7-ից—ամուսնալուծութեան մասին և գտնելով միանգամայն համամիտ 1899 թ. № 338 հրամանի, որն ընդունուած էր ի հրահանգութիւն և ի կատարումն, որոշեց զեկուցանել կառավարիչ Սենատին, որ նորա հրամաններն ընդունուած են ի հրահանգութիւն։

Նոյն թուին Սինոդն ընդունեց հոգևորականութեան մէջ Արսէն Տէր Գրիգորեան Տէր Պետրոսեանին և հրամայեց Երևանի Կոնսիստորիային ձեռնադրել նրան քհնյ. Տաթև գիւղի վրայ։

Որոշեց ընդունել հոգևոր կոչման մէջ Ղարաբաղի թեմի Մատաղիս գիւղացի Հայրապետ Յարութիւնեան Եղիազարեանցին և հրամայեց Ղարաբաղի Կոնսիստորիային ձեռնադրել նրան քհնյ։

Մայիսի 21 ին Սինոդը լուծեց Վարմազիար գիւղի վերաբնակիչ Եղիսաբէթ Սարգսեանի և Պօղոս Սարգսեանի պսակը վերջնիս տաժանակիր աշխատանքի դատապարտուած լինելու պատճառաւ անդառնալի և իրաւունք տուաւ Եղիսաբէթին վերստին ամուսնանալու։

Նոյն թուին ընդունեց Շուշուայ դաւառի Նորագիւղի բնակիչ Միքայէլ Զաքարեանին հոգեւորականութեան մէջ և հրամայեց Ղարաբաղի Կոնսիստորիային ձեռնադրել նրան առ այժմ սարկաւագ Նորագիւղի եկեղեցու համար։

Յունիսի 2 ին Սինոդը թոյլատրեց Շուշիքէնդ գիւղացի Խոսրով Ալէքսանեան Մուսայէլեանցի պսակը օր. Զառնի Մովսիսեան Զաքարեանի հետ ազգակցական եօթներորդ աստիճանում, որի մասին և հրամանագրեց Շուշուայ Կոնսիստորիային։

Նոյն թուին թոյլատրեց Զրակոյս գիւղացի Ներսէս Սարգսեան Միքայէլեանի և Սոֆիա Աւետիսեան Պետրոսեանի ամուսնութիւնը ազգակցութեան եօթներորդ աստիճանում։

Յունիսի 2 ին Սինոդը որոշեց բացատրութիւն պահանջել Ղարաբաղի Կոնսիստորիայից Ամարասի վանքի վիճելի հողաբաժնի տաճիկ բնակիչների բողոքագրի դէմ և հրամայեց թեմական արդիւնքներից վարձ վճարելով իրաւաբան վարձել և պաշտպանել վանքի շահերը։

Յունիսի 9 ին Սինոդը թոյլատրեց Սիսորաշէն գիւղացի Անուշկա Մարկոսեան Հայրապետեանի պսակը Հերհեր գիւղացի Սարգիս Ներսիսեան Յարութիւնեանի հետ, որի մասին և հրաման տուեց Ղարաբաղի Կոնսիստորիային։

Սինոդը յունիսի 9 ին որոշեց բացակայ համարել Մակար եպիսկոպոս Բարխուդարեանին, որը երեք ամսուայ արձակուրդ է ստացել Վեհափառ Հայրապետից ամառանոց գնալու և բժշկուելու համար։